

## ՊԱՏՄԱԿԱՆ

## ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ ՓՐՅՈՒԱԾ ԷԶ ՄԸ

Բշ. 16 Նոյ. 1915: Պարտիպակ կը գտնուին: Բքաշունչ ու խոր ձմեռ մը կը տիրէ յանկարծ, շա՛տ տարիներէ ի վեր չտեսնուած ձիւն կը տեղայ անդադար, անընդհատ: Գիւղին Միւտիր Ալի Շու՛նրի եւ Գոմխէժնի Նախագահ Իսսան Պէլէրու հետ՝ բարեբախտութի՛ւն թէ դժբախտութիւն կ'ունենան մոնէլու Ս. Յակոբ հայկական եկեղեցին, որուն մէջ աղօթք եւ օրհներգութիւնք լսուած չեն շուրջ չորս ամիսներ: Սրբութիւնը ու նուիրականութիւնը պղծուած, աղօթատեղիի հանգամանքէն զրկուած ու զրաւուած բոլոր ստացուածքներ, անկողիներ, կահ կարասիներ, կողովներ, պատկերներ, շիշեր, ճախարակներ եւայլն, եւայլն, ամէնքն խառն ի խառն ցուցադրուած, դիպուած կը մնային հոն. որջ աւապակաց եւ աւարառութեանց, Աստուած իմ Յիսուս ...:

Սոսկումով լացի ու հեկեկացի, երկրպագեցի առաջի Ս. խորանաց ու ինսանով հաւաքեցի անարգութեան մատնուած եկեղեցական մատենաները, անօթներն ու սպանները: Երկու պաշտօնէից հետ խուպարկեցի բոլոր գոյքերն ու վաղդերը, որոնք կը գտնուէին Ս. Ստեփանոսի մատրան եւ զգեստաւորման տեղւոյն մէջ:

Աջակողմեան մատուռը՝ որ ցայն վայր զոց կը մնար, Միւտիրի հրելով, արացելով եւ ոռնահարութեամբն վերջապէս բացուեցաւ: Եկեղեցիին հարստութիւնը կապնող Ս. Անօթներ, սկիհներ, շուրջառներ եւայլն ամէն ինչ իր սարօքն քննուեցան եւ թանկարժէք առարկաներուն հետ երկաթ սնուուկի մը մէջ տեղադրուելով, բանալին իր մօտ պահեց միւտիր Պէլ, հաստատուելով թէ՛ անոնք պիտի մնան անձեռնմխելի ...: Անձնական կարեւոր գրքերու պարկ մը դրած էի հոն, ընդ երկար յառեցի աչքերս անոր:

Յուշուած, ընկճուած ու արտասուալից կը բաժնուին Տիրոջ տաճարէն, համբուրելով Տ. Բառնարաս Բահանայի փոշոտ փիղոնը, որ առկախ կը մնար հոն, աչքերս յառած (վերջին անգամ թերեւս) Ս. Յակոբիս գոռ ու քաղցրահնչիւն զանգակին, որուն դաշն ու անուշակ ձայնը երկար տարիներու շրջանի մը մէջ՝ աղօթքի ու փառաբանութեան հրաւիրած էր Պարտիպակի նման Աստուածասէր, բարեպաշտ ու կրթանուէր ժողովուրդը:

Շուկան գրեթէ ամալի է, ցանցառ էնաֆութիւն մը կայ, տունները ամբողջ բաց ու կողոպտուած. զաղթականներ, մեծ մասամբ խեղճ ու անօթի, հոս հոն կը թափառին, տունները կը մոնեն համարձակ թալանելու համար ...:

\* \* \*

Ուր. 20 Նոյ.- Օր՝ յորում զանգակն Ս. Յակոբ եկեղեցւոյ բառնի ի տանէ իւրմէ, եւ փոխանակ խաչին՝ որ ի վերոյ գմբէթին, ծածանի դրօշակ:  
Հասար գիւղ:

Անանիա Վարդապետ